ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.5/35710-2025

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթի (Կ-1129-22.07.2025-ՏՏԳԾ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները՝ լրամշակված նախագծերը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծերում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին՝

1. Օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետում «կետի» բառը փոխարինել «պարբերության» բառով, 2-րդ կետի վրիպակը առաջարկում ենք շտկել՝ «89-րդ կետի» բառերի փոխարեն լրացնել «99-րդ պարբերության բառերը»՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասը:

2. Առաջարկում ենք հստակեցնել, թե ինչ ժամկետում և եղանակով է իրականացվում ջրօգտագործման թույլտվությունը չերկարաձգվելու դեպքում լիցենզիա տրամադրող լիազոր մարմնին ծանուցելը:

Հաշվի առնելով վերոգրյալը 7-րդ հոդվածում «այդ մասին ծանուցվում է լիցենզիա տրամադրող լիազոր մարմնին» բառերի փոխարեն առաջարկում ենք լրացնել՝

«ջրօգտագործման թույլտվության մերժման մասին լիազոր մարմինը պատշաճ ծանուցում է լիցենզիա տրամադրող լիազոր մարմնին մերժման մասին հրամանն ընդունելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում» բառերը:

3. Օրենքի նախագծի 11-րդ հոդվածը առաջարկում ենք հանել, հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը և այն հանգամանքը, որ Օրենսգրքի 121-րդ հոդվածի 6-րդ մասի 9-րդ կետը արդեն իսկ կատարմամբ իրեն պետք է սպառած լինի և չունենա իրավական նշանակություն որպես անցումային դրույթ:

4. Առաջարկում ենք վերանայել և հստակեցնել օրենքի նախագծի 12-րդ հոդվածի 3-րդ մասի ձևակերպումը՝ կանխելու համար հնարավոր հակասությունները նախագծի 9-րդ (լրամշակված 10-րդ) հոդվածի և ամբողջական օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետների միջև:

Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին

1. Վերնագրի «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:

2. 1-ին հոդվածից հանել «(այսուհետ՝ Օրենք)» ձևակերպումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենքի նախագծում օրենքին այլևս հղում չի կատարվում:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ